

ՊԱՏԵՐԱԶՄԸ

1

Փոքր, աննշան գյուղ է Կաղնուտը, այնպես որ երբ պե-
տական որևէ պաշտոնյա գնում է շրջանը պտտելու, նա
բնավ Կաղնուտ չի մտնում: Բայց լավ պարտեզներ ունի
Կաղնուտը և ավելի շատ բարդիներ, անթիվ շեկ բարդիներ,
որոնց ուղղաձիգ շարքերին նայողը զարմանում է իսկապես,
թե ինչու այդ շենի անունը Կաղնուտ է դրված, երբ մի
կաղնի անգամ չկա այնտեղ: Աննշան ու փոքր է նաև Կաղ-
նուտի տեղը. արձակ դաշտերից հեռացած՝ նա, խոռված թե
քամիներից պաշտպանվելու համար ասես, թաքնվել է մի
նեղ ձորակում, և երբ մի վերստ հեռավորությունից նայում
ես նրան, տեսնում ես միայն բարդիների անհամար կատար-
ներ, որ առաջին պահի թվում են թփեր՝ ամառ ժամանակ,
իսկ ձմեռը հիշեցնում են չորացած նալախոտի փնջեր...
Աչքտեղ՝ մի նեղ ձորակի մեջ, սարի արևադեմ լանջին կպած՝
Կաղնուտը նայում է երկնքին, մեկ էլ կողքից անցնող երկա-
թուղուն, որտեղից գիշեր-ցերեկ շրխկոցով ու սուլոցով անց-
նում են գնացքներն իրար ետևից: Անցնում են հեկհե,
շուսայ՝ շուտով կայարան հասնելու, որ ութ վերստի վրա է
Կաղնուտից:

Կաղնուտը... այդտեղ ամեն ինչ նույնն է, ինչ-որ մեր
բոլոր գյուղերում՝ մի փոքրիկ, տխուր եկեղեցի՝ քարերը
մամուռով ծածկված, փայտե չորս ոտի վրա կանգնած
բարձր մի զանգատուն, զանգերի թելերը սյուներից մեկին
կապած, մի փոքրիկ տերտեր, որ կարդալու ժամանակ ակ-

Անցը թելով կապում է ականջներին, մի խանութպան, որի կապույտ ներկած դռներով խանութում նախի հետ միասին ծախվում է «փունջուղով» կոնֆետ, և մի տանուտեր, որ կառավարում էր մոտակա երկու, Կաղնուտից ավելի փոքր ու աննշան, գյուղն էլ և, քահանայի որդի լինելով, սիրում էր խոսել գրաբար՝ «Ջի քոյե, համեմայն դեպս»... Եվ ինչպես քոլոր գյուղերում, Կաղնուտում էլ ապրում էին մարդիկ այնպես, ինչպես հարյուր, հազար տարի առաջ՝ ժամ էին գնում, մատաղ անում սրբերին, ցանում էին, հնձում. գարուն, ամառ, աշուն աշխատանք, աշխատանք, անձրև, կարկուտ ու երաշտ. ձմեռը գրույց օդաներում, հարսանք ու բուք... Ապրում էին ամեն մեկն իր հոգսով, հանգիստ հավատալով, որ իր «նակատին էդ է գրած»... Գյուղն ընդհանուր անհասգքատություն էր ընկնում միայն աշնանը, երբ տղերանցը տանում էին «սալդաթ»: Տանում էին հեռու-հեռու տեղեր՝ **Վարշադ, Ադես, Կոփի**... «Ընկածներին» կաղնուտցիները հյուրասիրում էին հերթով, տալիս էին նրանց գուլպա, շապիկ, թաթման ու գրեթե գեղովի ճանապարհ գցում մինչև կայարան: Եվ երբ «պոեզը» տանում էր տղերանց, նրանք երկար նայում էին պոեզի ետևից, նրա ծիխ ամպակոտակ քոլաներին, նրա հեռացող, սարերի մեջ կորչող ճամփին և հատաչում խմբով. «Անտե՛ր մնաս, անտե՛ր»... Ու քոլորին թվում էր, թե եթե չգար այդ պոեզը, իրենց որդիներին չէին տանի այդքան հեռու-հեռու տեղեր՝ **Կոփի, Վարշադ, Ադես**, էլ ի՛նչ իմանաս ուր, ո՛ր ծայրն աշխարհի... Բայց գյուղի հանգքատությունը վրդովվեց ավելի այն ժամանակ, երբ տանուտեր Արսենը հայտնեց, թե «կոիվ է բացվել» և թուղթ է եկել «գապաս տղերանց» հավաքելու:

Կաղնուտցիներն այդ օրը լավ են հիշում:

Տղամարդիկ հունձ էին գնացել. կանայք լսելով այդ՝ իրար անցան: Վազում էին նրանք տնետուն և, ծնկներին խփելով, հաղորդում իրար. «Իմացա՛ք, ախչի, կոիվ է, ասում են. տղերանցը տանելու են»... «Վո՛ւյ, քոռանամ ես, վո՛ւյ, խավարեք դուք: Ո՛վ առավ, ախչի»... «**Կանցիլարը թուղթ է եկել**»... «Վա՛յ, խավարեք դուք»... Ու լուրն իսկույն տարածվեց ամեն կողմ. շուտով հասավ և հանդը, ուր տղերքը խոտ էին հընձում... Ու երեկոյան տղերքը հնձից եկան թե չէ, տանուտերը

բոլորին կանչեց կանցիլար... Դրանց մեջ էր ամենից անաջ Մանկալանց Դապիթը, հետո Ծիրանանց Արշոն, ժամհարի տղա Չաքարը, Անդարդ Սեթոն, էլ որ մեկի անունը տաս. բոլորն էլ ջահել տղաներ, բայց դրանց մեջ Դապիթն էր մեծակ, որ վեց ամիս շկա եկել էր «ծառայութենից» և երեք ամիս էր, ինչ պատկվել էր... Մի խոսքով, տանուտերը սրանց բոլորին կանչեց և հայտնեց, որ «թուղթ է եկել զապասը հավաքելու». թող պատրաստ կենան վաղը քաղաք գնալու, այսինքն՝ այն գյուղաքաղաքը, ուր պրիստավն էր նստում, իսկ այդտեղից, ինչպես կարգն է, պիտի գնային գավառային քաղաք... Կանցիլարը լուսավորված էր մի հատիկ լամպով, այն էլ գրագիրը դրել էր անաջին, ապակուն հագցրել էր մի ուպիտակ թուղթ և սենյակի մեծ մասը թողել մթան մեջ։ Տղերքը կիսախավարում, փայտե երկար նստարանների վրա տեղավորված, լուռ լսեցին տանուտերին, լսեցին և, երբ նա վերջացրեց, սկսեցին միանգամից դուվոսլ։

— Կոի՛վ, էս նեղ մաջալին էդ էր պակաս, — խոսեց անաջինը Ծիրանանց Արշոն։

— Բա մեր արտերը, արտերը ո՞նց պիտի անենք, — բղավեց ժամհարի տղա Չաքարն իր հաստ, բամբ ձայնով։

Ու ամեն կողմից սկսեցին «արտեր, արտեր»... Բոլորը խոսում էին արտերի մասին, որովհետև արտերը հասնելու վրա էին։ Իսկ Անդարդ Սեթոն, ինչպես ամեն բանում, այստեղ էլ անդարդ ձևացավ։

— Է՛, տնաշենի տղերք, արտե՛ր, արտե՛ր... Էնտեղ կհընձենք, էլի՛. մարդ թե արտ՝ մի՛ն չի...

Ուրիշ ժամանակ գուցե տղերքը ծիծաղեին այս խոսքերից, բայց այսօր ոչ ոք ուշադրություն չդարձրեց. մի երկուսը նույնիսկ տհաճությամբ նայեցին նրան. «Սարսաղ, սավալակ...»։

— Իսկ ի՞նչ կոիվ է, խալիսա, — հարցրեց Ծիրանանց Արշոն տանուտերին։

— Որտե՛ղ, ո՞ւմ հետ, — հարցրին մյուսներն իրար ետևից։

— Էդ արդեն գի քոյե. կերթաք ինքներդ կտեսներ։ Ես ի՞նչ գիտեմ որտեղ է, — ուսերը վեր քաշեց տանուտերը և, գործն արդեն վերջացած համարելով, թեքվեց ծեր, նաղատ գլխով գրագրի՝ Արշակ աղի կողմը և սկսեց ինչ-որ բաներ

հարցնել: Լամպը լուսավորեց նրա երկար սուր բեղերը և չերթեզի շուխի արծաթե վազմաները, որոնք մինչ այդ լայ չէին երևում: Գրագիրն ակնոցի վերևից, հոնքերի տակով նրան նայելով, շարունակ գլխով էր անում. «Հա՛, հա՛, պատրաստ է»... Իսկ տղերքը բակը դեռ վերջացած չէին համարում և իրենց համար գոնե՛ ուզում էին պարզել՝ ի՛նչ կոիվ է, ի՛նչ կարող է լինել. ի՛նչ պիտի անեն տնեցիներն իրենց գնալուց հետո... Ու ոտի վրա խոսում էին, աղմկում, և այդ աղմուկի մեջ ամենից բարձր լսվում էր էլի ժամհարի տղա Զարարի ձայնը, որ կրկնում էր շուտ-շուտ. «Էս նեղ մաշալին էդ էր պակաս...»:

Այս բոլոր ժամանակ Մանկալանց Դավիթը լուռ էր: Նրան թվում էր, թե ամենը, ինչ կատարվում է շուրջը, երազ է, հանկարծահաս, ծանր մի երազ: Կոի՛վ. ի՛նչ կոիվ, որտե՛ղ, ինչի՞ համար: Հինգ տարի «ծառայութենից» հետո մի քանի օր չկա եկել է՛ նորից հրացան, նորից կազարմա, այն էլ, ով գիտի, որտե՛ղ... Ու կոիվ բառը կարծես հարվածում էր նրա գանգը՝ կոիվ, կոիվ... Տղերքը խոսում էին, աղմկում, քայց նա այդ աղմուկների մեջ տեսնում էր միայն հրացան, կազարմա, ցեխոտ ճանապարհներ, ուր քարշ է գալիս իրենց հետևակ գունդը՝ հոգնած, դադրած, փթաշափ բեռան տակ... Մեր ծնողները հազիվ ուրախացել էին, հազիվ մի կարգին ցանքս էր արել, հիմի այդ բոլորը, դրանց հետ էլ ջահել կնոջը թող ու գնա՛... Դավիթն իր մտածումներից սթափվեց միայն այն ժամանակ, երբ աղմուկը լռեց. տղերքը դուրս էին գնացել: Նա էլ վեր կացավ և գլխարկը, իր գինվոյական հի՛ն, կանաչ կանթով գլխարկը, որ վեց ամիս առաջ բերել էր հետը, դրեց գլխին ու դուրս գնաց:

Դուրսը՝ գեղամիջին, տղերքը դեռ խոսում էին տան մասին, արտերի մասին, հնձած խոտերի մասին:

«Բա մեր սարի խո՛տը», մտածեց Դավիթը. ով պիտի բերի, եթե ինքը գնա: Հա՛յրը, նա չի կարող... Մտածեց Դավիթը, մտածեց ու մտքում վճռեց. «Գնամ մի խալփին խնորեմ, կարելի է մի երկու օրով թողնի»: Ու ետ դարձավ կանցիլար: Տանուտերն ու գրագիրը մե՛նակ էին: Դավիթն զգուշությամբ, որ չխանգարի, անձայն քայլերով առաջ գնաց, գլխարկը վերցրեց և կանգնեց տանուտերի առաջ: Խալփեն

ի՞նչ-որ թուղթ էր ստորագրում՝ տատերը հատ-հատ գրելով, և ամեն մի գիծը քաշելիս՝ նրա սրածայր բեղերը շարժվում էին շրթունքների հետ: Երբ, վերջապես, վերջին տառի պոչը քաշեց ցած, գլուխը բարձրացրեց:

— Հը, ի՞նչ կա, Դավիթ աղա...

— Դուք ողջ ըլեք, խալիսա. մի բան եմ ուզում խնդրեմ,— խոսեց Դավիթը ճիգով ժպտալով և միաժամանակ նայելով գրագրին, որ, գլուխն առանց բարձրացնելու, գրում էր շարունակ ճկույթը մյուս մատներից. բաժանած:— Ուզում էի խնդրեմ, խալիսա, որ մի օրով թողաս ինձ...

— Զի քոյե,— ընդհատեց նրան տանուտերը:— Էդպես բան չկա, առավոտը պատրաստ կըլես. գեղի տղերքը ծեգին էստեղ կըլեն:

— Խնդրում եմ, խալիսա: Սարի գլխին խոտ ունեմ սխր...

— Ես էլ ունեմ:

— Դե, քու բանն ուրիշ, խալիսա. դու երկու օրից ետը էլի կգաս, կբերես կամ բերել կտաս...

— Քոնն էլ թող հերդ բերի. հերդ ի՞նչ է:

Դավիթը խնդաց տխուր:

— Էհ, խալիսա, նա սկի կարում չի կատարած կալումը ման գա, ուր մնաց սարից խոտ բերի:

— Թող ախպերդ բերի:

— Նա էլ, դե, իրա համար. իրա բանը գոռով է անում...

Խնդրում եմ, խալիսա. թեզ կվերջացնեմ՝ ձեզ կհասնեմ...

— Քեզ սաի որ՝ զի քոյե,— վեր կացավ տանուտերը, չերթեզի չուխաչի փեշերն ու գոտիկն ուղղելով:— Ես բանտ նստելու իշտահ չունեմ, համենայն դեպս...

Դավիթը գուցնը գցեց, փորին բռնած գլխարկը դողդողաց նրա ձեռին.

— Ուրեմն, վախո՞ւմ ես՝ փախչեմ,— խոսեց նա փոխված ձայնով:

— Ես ինչ գիտեմ, փախար՝ փախա՞ր,— ասաց տանուտերն ու արագ-արագ դուրս եկավ:

Մի երկու րոպե Դավիթը մնաց մտածմունքների մեջ կանգնած, նայեց գրագրի՝ Արշակ աղի ճաղատ գլխին, որ փայլում էր լամպի լույսի տակ, նրա ճկույթին, որ դողդողում

Էր մյուս մատներից բաժանված և «լա՛վ» ասաց ափրոզ կրծքով ու դուրս եկավ տանուտերի ետևից:

Հետևյալ օրը, վաղ առավոտյան, գյուղացիների մի մեծ խումբ Կաղնուտից ճամփա ընկավ դեպի կայարան: Մարդ, կին, ջահել ու ծեր իրար խառնված գնում էին դաշտի ճանապարհով, որ ոլոր-մոլոր ձգվում էր արտերի միջով և այսպես գնում դեպի կայարան... Պարզ օր էր. արտույտները երգում էին օդում. քամին, մի բարակ, զով քամի անցնում էր ցորենների վրայով, և արտերը վետ-վետ ու ալիքավոր հորձանքով գնում էին դեպի բլուրները... Արտերին նայելով, գյուղացիները գնում էին մի հսկայական թափոր կազմած: Ամենից առաջ, իր ներմակ ձիու վրա գնում էր տանուտեր Արսենը՝ չերթեզի շուխեն հագին, տանուտերական նշանը դեղին շղթայով վիզը գցած, ինչպես անում էր առհասարակ պաշտոնական գործերով տեղ գնալու ժամանակ (մի ուրիշ նշան էլ փոքրիկ օղով կարած էր կրծքին): Տանուտերի երկու կողմից, մի քանի քայլ հարգալից հեռավորության վրա, գնում էին երկու գզիրն իրենց նիհար, ոստոստուն ձիերով: Իսկ դրանց ետևից տղերք, կանայք, երեխաներ: Դրանք Կաղնուտի և մյուս երկու գյուղի զապաւաններն էին (պահեստի զինվորները), որ գնում էին կայարան: Իսկ նրանց հետ ազգական ու բարեկամ՝ մայր, եղբայր, հայր, կին կամ քույր, մի-մի կապոց ձեռների՝ ուղեկցում էին տղերանց:

Խմբի մեջ էր և Մանկալանց Դավիթը: Հաղթ կուրծքը դուրս գցած, գլուխը բաց, հին շինելն ուսին, գնում էր նա և փնթփնթում տանուտեր Արսենի վրա: Նրա հետ գնում էին պատավ մայրը՝ Մարան նանը, մի քանի ձու և երկու խաշած հավ կոնատակին և կինը՝ Վարդիշաղը, նույնպես մի փոքրիկ կապոց ձեռքին: (Հայրը՝ ծեր Ոսկանը, մնացել էր տնայան): Վարդիշաղը, որպես նորահարս, գնում էր աչքերը գետնին գցած: Պսակից հետո առաջին անգամն էր մարդու հետ դուրս գալիս հասարակության մեջ... այն էլ այդքան բազմության մեջ: Բոլորը նայում էին նրան, նրա շալ շորերին, նրա կլապիտոնե դեղին գոտուն, շրջագգեստի փոթ-փոթ ծայրերին, և նա, անթիվ այդ նայվածքներից ամաչելով, աշխատում էր մարդու հետ չքայլել, այլ շարունակ՝ սկեսրոջ կողքից: Վարդիշաղն ամաչում էր, քայց նրան մխիթարում էր այն հանգա-

մանքը, որ ուրիշ ջանել հարսներ էլ կային իրենց հետ, թեև իր պես երեք ամսվա պակաս չէին, բայց էլի ջանել էին Մեկը, օրինակ, Ծիրանանց Արշուի քույրը, որ եկել էր մարդուն ու եղբորը ճամփու դնելու, մյուսը՝ Իրիցանց հարսը՝ ամուսնուն և տեղորը:

Արտերին նաչելով՝ տղերքը շարունակ խոսում էին, կատակում:

— Եթե ավինդն ըսենց գնա, ցորենները մի շաքաթից կհասնեն,— ասում էր ժամհարի տղա Ջաքարն իր մանր ու խոր աչքերն արտերից շեռացնելով:

— Ո՛նց չէ, դո՛ւ էլ կուտես,— ծիծաղեց Անդարդ Սեթոն, որ խմբից խումբ անցնելով, կատակներ էր անում տղերանց, կանանց հետ:— Տե՛նանք դու կուտես, թե ուրիշները՝ քո հոգու համար:

— Դե քերանդ խերով քաց արա՛,— կշտամբեց նրան Մարան նանը՝ Դավթի մայրը:— Ծաշանալ մի՛, հարսանիք չես գնում:

— Հարսանիք,— ծիծաղեց նորից Սեթոն.— ի՛նչ պակաս է: Մի քանի ամիս կմնամ, մեկ էլ տեսար՝ տիր-նա-նի-նա՛... տիր-նա-նի-նա՛...— նվագեց Սեթոն քերանով ու մատները շարժեց քերնի առաջ,— ի՛նչ է. Սեթոն Ռուսաստանից քերում է մի մաթուշկա... մագերը շեկ, աչքերը չալ...

— Ձե՛նդ կտրի,— սաստեց նրան նանը:— Քու մերը մաթուշկա պահող չի:

— Է՛, Մարան նանի,— ձեռները շարժեց Սեթոն, իբրև թե պառավի միամտությունը ցույց տալով:— Մեկի տեղ երկո՛ւսը պիտի քերես. երկո՛ւսը, երկո՛ւսը,— խաղացրեց նա ձեռները գլխի վերև և սկսեց պարել:— Երկուսը, երկո՛ւսը...

— Ջվալիդ քերանը փակի, մասխարա՛,— վրդովվեց նանը,— մեր հայ հավատին էդ էր պակաս: Մաթուշկա, է՛ն էլ երկուսը...

Ու, երեսը շրջելով, քայլերն արագացրեց:

Ծաշի մոտ հասան կայարան: Մինչև գնացքի գալը նրատեցին սովեր տեղերում՝ պատերի տակ, ակացիների և բարդիների շվաքում թե՛ հանգստանալու և թե՛ «մի քիչ նհար» անելու: Սակայն չանցավ մի քանի րոպե, գանգը տվին. գնացքը դուրս եկած՝ գալիս էր: Բոլորն իրարով ան-

ցան, կապոցները վերցրին և խմբվեցին պլատֆորմի վրա։ Պատալ Մարանը մի կողմից հարսին հսկելով, որ «գլադա-գլուդեք» չգիպչեն նրան, մյուս կողմից որդու փեշը բռնած՝ ասում էր. «Դավո ջան, նամակդ անպակաս կանես, ջահել հարս է, սիրտը կտտրի ոչ»... Իսկ Դավիթը շարունակ ժպտում էր. «Հա՛, նանի, հա՛. դու գիլ կաց», ասում էր նա մորը, և, կնոջը ցույց տալով, ավելացնում. «Էս շաշին լավ կպա-հես...»:

— Բեզ համար ի՞նչ բերեմ, ախշի, — դարձավ նա կնոջը ցած ձայնով: — ի՞նչ կուգես, հը՞...

Վարդիշաղը, ձեռները կրծքին՝ գլուխը թեթև շարժեց, և գլխի այդ շարժումով կարծես հասկացնել էր ուզում, թե դու ողջ վերադարձիր, ինձ ոչինչ էլ հարկավոր չի:

Գնացքը սույեց հանկարծ, հեալով եկավ և շրխկոցով կանգ առավ: Վագոններից դուրս թափվեցին «վերի գեղերից» եկող զապասները, վագեցին ջրի տակառի մոտ և, իրար հրե-լով, իրար վրա ջուր ցանելով, սկսեցին ջուր խմել: Իսկ վա-գոնների լուսամուտներից գլուխները դուրս հանած՝ դրանց, կայարանին և բոլորին նայում էին դեղին կոճակներով, ակ-նոցով և կրախմայով մարդիկ:

— Դե՛, տղերք, տեղավորվեցեք, — լսվեց տանուտեր Ար-սենի ձայնը, որ մինչ գնացքի գալը գալումը նստած՝ պա-սիրոս էր քաշում: — Դե՛, դե՛... — Ու, աչքը վագոնների մե-ծավոր մարդկանց, վզի շղթան ու կրծքի վագմաներն ող-դելով անցնում էր նա տղերանց առաջից և կարգադրություն-ներ անում:

Դավիթը, նրան նայելով, սկսեց նորից փնթփնթալ:

— Ձեռ քաշի: Դավիթ ջան, բան չունե՛ս, — հանգստաց-նում էր նանը նրան: — Ձե՛ն քաշի:

Տղաները կամաց-կամաց տեղավորվեցին: Դավիթը նույն-պես մտավ վագոն: Նանն ողեկցեց նրան մինչև վագոնի շեմքը (նրանք գնում էին ապրանքատար վագոնով):

— Ձվերը կտտրես ոչ, Դավո ջան. աղն աղլուխի տտումը կապած ա, — խորհուրդներ, ցուցումներ էր տալիս նա իրար ետևից և ձեռք ծոցը դրած նայում, թե հարմա՞ր տեղ է նըս-տելու արդյոք Դավիթը և կապոցը չի՞ գցի արդյոք այնպիսի տեղ, որ ձվերը կտտրվեն: Եվ նա վագոնից հեռացավ այն

յամսնան; ժիայն, երբ գնացքը սուլնց: Եւ յախով ետ կանգ-
նեց և շարժող գնացքի ետնից ձեռները բարձրացրեց վեր,
գետի երկինք.

— Դո՛ւ հարեհաս ըլես, ո՛վ գորավոր սուրբ Սարգիս...

2

Տղաների գնալուց հետո Կաղնուտն իրեն զգում էր հան-
կարծ թալանված: Եւստ քիչ տուն կար, որ կոխվ գնացած զին-
վոր չունենար կամ ազգական ու բարեկամ շիներ գնացածին:
Իսկ Կաղնուտում գրեթե բոլորն ազգական ու բարեկամ էին
իրար, և այդ պատճառով, տղերանց գնալուց հետո, բոլորը
գրեթե սպասում էին լուր, համակ: Ո՛վ որտեղ գնաց, ո՛ր
մնաց, ի՛նչ եղավ... Սպասում էին անհամբեր, ջղագրգիռ ու
տագնապով: Այդ տագնապն ավելանում էր մանավանդ
այն ժամանակ, երբ մութն ընկնում էր կամ երբ երկինքը
ծածկվում էր ամպերով, երբ անձրև էր գալիս: Բոլորի մեջ,
տակալն, և ամենից ավելի անհանգիստ էր Մարանն նանը:
Աշխատանքի միջոցին, թե պարսպ ժամանակ նա Դավթին
չէր մոռանում թե դաշտում, երբ հասած արտերում զրնգում
էր գերանդին, թե այն ժամանակ, երբ կոպերը բառաչելով
գալիս էին հանդից, թե տանը, երբ հարսը ման էր գալիս
առաջին, նա, որդուն մտաբերելով, շարունակ քրթմնջում էր
ինչ-որ: Իսկ երբ եկեղեցու զանգերը կանչում էին «ժի՛նգ-
ժի՛ն, ժի՛նգ-ժի՛ն», նա խաչակնքում էր երեսը և աղոթքի
կանգնում: «Տեր, դու օգնե՛ս»... Իսկ ծեր Ոսկանը, Դավթի
գնալուց հետո, հարևան Պետրոսի օգնությամբ, մի կերպ բե-
րեց սարի խոտը և դիզեց, հետո, երբ արտերի հունձն
վկալեց, նա, իր հին գերանդին ու սրոցը վերցրած, գնաց
արտերը հնձելու: Մարանն նանը, երբեմն և Վարդիշաղը գնում
էին նրան օգնելու: Թեև պատավը չէր ուզում, որ հարսը այդ
տեսակ աշխատանք անի, բայց որովհետև նա մեկնակ պիտի
ձանձրանար տանը կամ լաց լիներ, նանը նրան տանում էր
իր հետ: Որքան էլ չէր թողնում բանելու, բայց Վարդիշաղը,
սովոր լինելով դաշտային աշխատանքի և պարսպ նստելու
ամոթից, օգնում էր ծերերին: Փոցխում էր, միջակներում
մնացած հասկերն էր պոկում կամ եղանը ձեռքին բլուրներ

էր շինում և միշտ՝ գլխաշորը ճակատին քաշած, որ արևը
դեմքը չվառի: Այնուհետև կալիճ՝ բոլորն աշխատում էին
միասին: Եվ բոլորը այդ աշխատանքի մեջ անհամբեր սպա-
սում էին էլի նամակի:

Վերջապես այդ նամակը եկավ: Գյուղի մարդիկ դեպքերը,
մեծ թե փոքր, լսվ են հիշում, իսկ թիվ և ամիս՝ ամենևին.
«Էս բանը պատահեց Լճ տարին, երբ մաշինի նամակն
եկավ», — ասում են, կամ՝ «Էն տարին, երբ տերտերակինը
մեռավ»: Այդպես էլ՝ Դավթի առաջին նամակն իր գնալուց
որքա՛ն ժամանակ հետո եկավ, դժվար է ասել, բայց նա եկավ
Աստվածածնա տոնին: Դավիթը գրում էր, որ ինքը լսվ է և
«կուզի, որ դուք էլ լսվ լինեք և գործով աջողակ»: Ծան բա-
րով էր անում նանին, ամուն՝ հորը և կնոջը՝ Վարդիշաղին:
Է՛լ՝ դո՛ւք ողջ լինեք: Կույի մասին ոչինչ չէր գրում: Վերջում
ասում էր միայն, որ գնում են «Գերմանի կողմը»: Դե, այդ-
քան էլ որ գրել է, հերիք է, ինքը ողջ լինի. միայն թե նամա-
կըն անպակաս անի... Բայց երկրորդ նամակն ստացվեց շատ
ուշ: Անցավ նոր տարին, անցավ Բարեկենդանը, անցավ մեծ
պատը, նոր Զատնիին միայն մի բաց նամակ եկավ՝ երեսին
մի ծեր մարդու պատկեր: Դարձյալ շատ բարով էր անում
բոլորին և գրում էր, որ իրենց «պոլկը Կարպատումն է»:
Տնեցիներն, իհարկե, շատ ուրախացան, որ, վերջապես,
նամակ եկավ, և այդ նամակը մի բանի անգամ կարդալ
տվին սրան-նրան: Բոլորը լսվ էր, հասկանում էին, բայց թե
ի՞նչ բան էր այդ «Կարպատը», ոչինչ չհասկացան: Մինչև
անգամ տերտերն էլ բան չհասկացավ: Ակնոցի թելերն
ականջների ետևը կապած՝ նա նայեց նամակին, նայեց և
գլուխը շարժեց. «Օրհնվածը հնեց չի գրում, որ մի բան հաս-
կանա... Կարպե՛տ թե՛ Կարպատ, քաղաք է, գյո՛ւղ, ի՞նչ
իմանա»...

— Բա է՛ս պատկերն ինչ է, տերտեր ջան,— ցույց տվեց
նանը բացիկի երեսի ծերունու նկարը:

— Դե դա էլ իրենց քարոզիչը կլինի, ո՛վ է իմանում...

Այդ օրվանից հետո էլ նամակ չեկավ: Նանը որդու նա-
մակները պահում էր ծոցում, և եթե մեկը հարց էր տալիս
Դավթի մասին՝ հանում էր դրանք և ցույց տալիս: «Էս եր-
կու նամակն է դու արել...»: Ու նամակները ծոցին ամեն

կիրականամուտ գնում էր եկեղեցի, չեչից շինած կարմիր մո-
 սեր էր վառում և աղոթում Դավթի համար՝ «Տեր, դու խնայեա
 ամեն դարիքի ու ամեն կորածի»... Հետո, եկեղեցուց դարձին,
 մտնում էր Ծիրանանց տուն, ժամհարի տուն և առհասարակ
 այն բոլոր տները, ո՛ւմ տղեն զինվոր էր: Ո՛վ է իմանում,
 գուցե մի քան էլ Դավթի մասին գրած լինեն... Բայց ոչինչ
 չէր լինում: Ժամհարի տղա Զաքարը, ասում էին, Վարշավ է,
 Իրիցանց Սերոն՝ Վան թե Էրզրում, Ծիրանանց Արշուն առաջ
 Գերման էր (անունն էլ դժվար է ասվում, ով գիտի ինչ կո-
 բած մոլորած տեղ է). հիմի էլ տարել են, ասում է, Տրապի-
 զոն... ո՛ր ո՛ր... Տրապիզոն... Դու խնայեա, ով ձիավոր սուրբ
 Գևորգ... Մեկ-մեկ էլ պատավ նանն այնպիսի երազներ էր
 տեսնում... այդ ժամանակ, խունկ ու մոմ վերցրած, գնում
 էր գորբացի մոտ. և գարի գցողն ամեն անգամ ասում էր միև-
 նույնը. «Տեղը դժվար է, բայց նամիս է ընկնում»... Մինչ
 նանն այսպես դես ու դեն էր ընկնում Դավթից մի լուր ստա-
 նալու հույսով, հայրը՝ ծեր Ոսկանը, քանի վրա, թե տանը
 նստած, երբեմն մեկ էլ տեսար խոսեց ինքն իրեն. «Էն տղի-
 ցը նամակ չէկավ էի՞»... Նրան պատասխանում էր հարսը
 կամ կինը, եթե լսում էին, իսկ եթե պատասխան չէր ստա-
 նում, նույնը կրկնում էր մի քանի անգամ. «Էն տղիցը նա-
 մակ չէկավ էի՞»... և ապա կամաց, շատ կամաց ավելացնում
 էր. «Ով գիտի ի՞նչ պատահեց»... Ու այսպես անցնում էին
 օրեր, շաբաթներ ու ամիսներ: Անցավ տարի, տարիուկես,
 նամակ չկար ու չկար: Վարդիշաղը դեռ ջահել հարս՝ տխրում,
 լաց էր լինում թաքուն տեղեր, մանավանդ տխրում ու լաց
 էր լինում, երբ քաղաքից եկողները պատմում էին կույի մա-
 սին: Պատմում էին հազար ու մի քաներ. պատմում էին,
 թե թուրքը «ժած է եկել», և թե ինգլիզը գնում է թուրքի վրա
 նավով, գործով. պատմում էին, թե ֆրանկները մի այնպիսի
 թոփ են հնարել, որ տասը լուծ գոմեշ չի քաշի, որը երբ գցում
 են, միանգամից մի քաղաք է սրբում, հողն ու փոշին ամափ
 նման չոքում է մի քանի օր, իսկ ձայնից հետվում խլանում
 են զինվոր ու զորք... Ազատե՛ա, տեր. ինչեր չէին պատմում...
 Կոիվը մեծ է, ասում էին, կոիվը երկա՛ր. ամեն ազգ ու ցեղ
 վեր են կացել իրար վրա... Չէ՛, շուտ չի վերջանա... Պատավ
 նանն էլ տեսնում էր, որ կոիվը մեծ է, շա՛տ մեծ... Ամեն

օր, ամեն օր, աստծու օր ու գիշեր պոեզը չէր կտրվում պոե-
զի ետևից, և ամեն օր վագոնները տանում էին զինվոր, զին-
վոր՝ հրացանով, անհրացան... Տանում էին բաց վագոններով
և մի տեսակ խաչ նկարած վագոններով... Սրանք էլ, ասում
էին, վիրավորներ են... «Կուրանա՛՛ ձեր մերը»... Գնում, գա-
լիս էին պոեզները, շվացնում գլուխի մոտ, գոգոալով անց-
նում կամորջը և գնում, գնում իրար ետևից: Տանում էին
էլի զինվոր, ձի, թուփ-թնդանոթ ու էլ ի՛նչ ասես: Տանում
էին, գնում ու գնում՝ «Ու ո՛ւ ո՛ւ»...

— Ասու կրա՛կ, ասու կրա՛կ,— ասում էր նաև ամեն
գնացքի ձայնը լսելիս և երբեմն չափնում նրա ետևից:—
Տարար յեխիս չոլերը գցեցիր, ե՛րբ պըտի, ա՛յ անտեր, մի
խաբար բերես...

Ծարաթը մի անգամ, երկու անգամ Կաղնուտի գզիրները
գնում էին կայարան՝ թերթեր, նամակներ բերում, և շաբաթը
մի անգամ Մարան նաևը գնում էր կանցիլար գրագրի՝ Ար-
շակ աղի մոտ: Դավթից ոչինչ չէր լինում:

— Մի էն տակի թղթերը տես,— ասում էր նաևը գրագրին
ամեն անգամ, երբ նա բացասական պատասխան էր տա-
լիս:— Կարելի է լավ չես տեսել...

— Կա ո՛չ, ա՛յ պատավ, կա ո՛չ, որ ըլի հո գլխիս չեմ
տալու:

— Բա էս ո՛նց պըտի ըլի, Արշակ աղա. ինչի՞՞ նամակ
չի դու անում:

Գրագիրը շարունակ գրում էր և, առանց գլուխը բարձ-
րացնելու, պատասխանում անտարբեր.

— Ո՛վ է իմանում. կարելի է փող չունի...

— Փող, բռանամ ես,— մատը ցամաք շրթունքին էր
դնում նաևը:— Թող գրի թե՛ փող չունեմ... Հավ, ձու կտա-
նեմ ստանցին՝ կծախեմ, փող կդրկեմ, միայն թե գրի տեղն
իմանամ որտեղ է... Թե արևդ ապրի, Արշակի աղա, կարալ
չես մի տեղն իմանաս,— շարունակում է նաևը ձեռքը ծոցը
տանելով:— Էս հրես իրա նամակները, ադրեսն էլ միջին
ա...— Ու նաևը նամակները դնում էր գրագրի սեղանին:—
Հը՞, Արշակ աղա, չի ըլի մի նամակ գրես իրա մեծավորների
վրա: Գրես թե՛ էս Դավիթ Մանկալովը որտե՞ղ ա. կարելի
է մի խաբար անեն...

— Է՛հ, դժվար է, պատալ, դժվար,— ասում էր գրագիրն ու շարունակում իր գրությունը:

Դժվա՛ր... Նանը չէր հասկանում ի՞նչն է դժվար. մեծա-
վորներին գրե՛լը, թե՛ նրանցից պատասխան ստանալը:

Մի օր էլ, երբ նանն այսպես խոսում էր գրագրի հետ, ներս մտավ տանուտեր Արսենն իր արծաթե վաղմաներով չերթեզի շոխեն հագին:

— Էլի՛... Դե ա՛յ պատալ,— ասաց,— որ սաղ ըլի՛ դու կանի, էլի:

Սա՛ղ... Ուրեմն կարող է պատահել Դավիթը մեռած լի-
նի՞, սպանվա՞ծ... Նանի լեզուն չի զորանում, լեզուդ չորա-
նա, տանուտեր Արսեն... Թեև չէր հավատում պատալը, բայց նրա սիրտը մի մութ կասկած ընկավ. ի՞նչ կանի, եթե Դավիթը մեռած լինի իսկապես... Կարո՞ղ է պատահել, որ այդպես բան լինի... Է՛, չէ մի, ինչեր է մտածում: Խոսք էր, էլի, Արսենի բերանն եկավ՝ ասավ:— «Աստված որ ագուսի ձեներ ըսի՛ Վարթիվորի՛ն ձին կգա... Թող ասի, հողեմ գլուխը...»:

Տխուր վերադարձավ պատալը տուն և նստեց շենքին:

Աշուն էր, քամի, տան առաջի բարդիները խշշում էին ու տերևաթափ լինում: Նրանց հետ խշշում էին և բոլոր բար-
դիները, խշշում էին միատեսակ խուլ, համատարած խշշո-
ցով, և ընդհանուր այդ խշշոցի ժխորից բացի գյուղում ուրիշ
ձայն չէր լսվում: Խշշում, խշշում էին բարդիները, և նրանց
դեղնած տերևները խմբով թռչում էին քամու հետ կամ օդա-
պտույտ տատանումներով թափվում գետին: Եվ գետին ընկ-
նելով, ահից հալածված ասես, խմբվում էին իրար մոտ,
հավաքվում անկյուններում, թաքնվում խոռոչների մեջ կամ
մտնում ծածկույթների տակ...

Մարան նանը շենքում նստած դնդնում էր ու հետն էլ
մտածում, թե չլինի իսկապես մի բան է պատահել Դավիթին.
Ինչո՞ւ հապա նամակ չի գրում... եթե մի բան պատահած լի-
նի և հարսի ծնողներն իմանան, ի՞նչ կանեն: Վարդիշաղին
կտանեն երևի... Նանը լսել էր, որ նրանք այդպիսի մտա-
դրություն ունեն: Այստեղ-այնտեղ խոսում էին այդ մասին,
և այդ խոսքերը նանի ականջն էին հասնում: Թեև հարսի
հերանք հեռու էին, Կաղնուտից երկու գեղ այն կողմ, բայց

նրանց մտադրության մասին նանը լսել էր: Ուզում էին Վարդիշաղին տանել... Էհ, երկու տարուց ավելի է, քիչ ժամանակ չի, մարդը չկա, մտածում էր նանը հարսի մասին: Իսկ շունը նրա ոտների մոտ պառկած հանդարտ մոռում էր: Դա գալլանման, մազերը սևին տվող, ականջների ծայրերը կըտրած, պոչատ շուն էր: Երբ պառավը դնում էր լսելի ձայնով, նա կտրած պոչն ու ականջները շարժում էր և նայվածքը հառում պառավի դեմքին:

— Երանի քեզ, այ Չամբար,— խոսեց նանը հանկարծ շանը դիմելով:— Ցարաք քո միտն էլ գալիս է Դավիթը, այ Չամբար:

Շունը, կտրած պոչն ու ականջները ավելի շարժելով, տխուր նայեց տիրուհուն:

— Նա քեզ շատ էր սիրում, այ Չամբար: Իհարկե, ո՛նց կմոռանաս...

Շունը հանկարծ մոռաց բարձր և, աչքերը բակի դռանը, կանգնեց անաչին ոտների վրա. հսկող հայացքով նայեց և, տեսնելով եկողը ծանոթ է, նորից նստեց: Մանր քայլերով, ձեռնափայտը, ավելի շուտ մի ճիպոտ կոնատակին, գալիս էր մի շեկ, փոքրիկ, տարիքոտ մարդ: Նանն իսկույն ճանաչեց. Վարդիշաղի հայրն էր՝ Դեղին Ծիտը, ինչպես անվանում էին նրան իրենց գյուղացիները նրա դեղին մազերի և բարակ ձայնի պատճառով:

— Բարի օր քեզ, խնամի Մարան,— ասաց նա դեռ հեռվից մի այնպիսի բարակ ձայնով, որ կարծես դուրս էր գալիս մի նեղ, ասեղի ծակի չափ նեղ, կոկորդից:

— Բարին արևիդ, խնամի Խունկի,— պատասխանեց պառավը, տեղից ելնելով:

Բարևելով նրանք նստեցին իրար կողքի, հենց շեմքի մոտ ընկած գերանին:

— Է՛հ, ո՛նց եք, խնամի Մարան:

— Փա՛ռք իրան, խնամի Խունկի, ապրում ենք, էլի:

Խնամի Խունկին չիբուխը հանեց գոտկից և, միջի մոխիրը թափ տալու համար, մի երկու անգամ խփեց գերանին, ապա սկսեց հանդարտ լցնել թութունով:

— Էհ, խնամի Մարան, ապրել էլ կա, ապրել էլ,— շարունակեց նա իր նովորուն ձայնով և միաժամանակ չիբուխը

լցնելով:— Ապրել կա խոսքով, ապրել կա ոսկով... Նա նորից լռեց, չիբուխի ետնից ընկած, և երբ պատրաստեց այն, նախքան բերանը կոխելը ձեռքն զգուշությամբ դիպցրեց պանալի թևին:— Բա էս ո՞նց պըտի ըլի, խնամի Մարան,— ասաց նա հանդարտ հոգոցով, ու, խոսքը չավարտած, չիբուխը վառեց:

— Ի՞նչը, խնամի Խունկի:

— Էս մեր Դավիթի բանը, խնամի Մարան:

Պատալի ձեռներն ու ծնկները դողացին նստած տեղը: Նա ցամաք շորթերը սեղմեց և երկչուտ նայվածք նետեց խնամու աչքերին, նրա դեղին հոնքերի տակ, դեղին արտևանունքների մեջ հանգիստ նստած աչքերին:

— Բան գիտե՞ս, խնամի:

Խնամի Խունկին հանդարտ չիբուխը հանեց ատամների արանքից:

— Չէ՛, խնամի Մարան: Ասում եմ մի խաբար չեկա՞վ, էլի:

— Ո՞ր է թե: Որտեղի՞ց,— հառաչեց պատալը:

— Հը՛րմ,— մզզաց խորհրդավոր ու երկար խնամի Խունկին և, անժամ լռելուց հետո, հարցրեց.— Էս քանի՞ տարի էլավ...

Նանը նորից հառաչեց.

— Երկու տարուց ավելի է, խնամի Խունկի. Վարդիվորին իրերը կթամամի:

Խնամի Խունկին նորից մզզաց.

— Հը՛րմ... Երկու տարի՛,— խոսեց նա բերանի անկյունով, չիբուխն ատանց հանելու և, քիչ հետո, չիբուխը ձեռն առնելով, գլուխն իջեցրեց ու աչքերը հառեց գետնին:— Բա էս ո՞նց պըտի ըլի,— շարունակեց նա դարձյալ աչքերը գետնին,— էդ աղջկա, Վարդիշաղի բանը...

Նանը հասկացավ Դեղին Ծտի միտքը: Նա լսել էր, որ Վարդիշաղին ուզում են տանել, լսել էր և այն, որ մի ինչ-որ ունևոր լորուտեցի առաջարկ էր արել՝ Վարդիշաղին առնելու:

— Ինչի՞ համար էս հարցնում որ, խնամի,— խոսեց նանը շորթերը սեղմելով, ինչ ցույց էր տալիս, թե արդեն գլխի է ընկել բանն ինչումն է և պատրաստվում է հարկավոր պատասխանը տալու:

— Ինչի՞ համար... Դե, դու էլ կնիկարմատ ես, խնամի Մարան, կհասկանաս, էի... Ջահել աղջիկ է, սիրտը կոտրած...

Նանը շուրթերն ավելի սեղմեց և նստած տեղը տրորվեց անխոս:

— Գիտե՞ն մարդիկ, գիտե աստված, խնամի Խունկի,— խոսեց նա հառաչանքով, ծանր և գրեթե հանդիսավոր:— Գիտե՞ն ամենքը, որ աղջկանդ աչքիս լսի պես եմ պահում: Ասած չեմ մի օր՝ էս ծուխը քեզ, կամ մեկնած ոտդ քեզ քաշի...

— Ծնորհակալ եմ, խնամի Մարան, հաստատ մնաս... Բայց ասում եմ, ջահել աղջիկ է, էի՛, ո՛վ է իմանում... Մերն ասում է՝ թող մի քանի օր էլ գա մեր տուն: Ասում է՝ թեխանց մեջ սիրտը կբացվի մի քիչ...

Մի քանի անգամ էլ հերանք այդպես ուզել էին հարսին, մի երկու անգամ նանը համաձայնել էր, մի երկու անգամ չէր համաձայնել, պատճառ բերելով իրենց մեճակությունը, աշխատանքը. խոստացել էր, որ ինքը կտանի Վարդիշաղին հերանց տուն (և տարել էր ու ինքն էլ մի քանի օրով մնացել): Բայց այդ բոլորն արել էր մեծ դժվարությամբ. առանց հարսի դժվար էր, չէր կարողանում ապրել: Ոչ թե գործիքանի համար, ոչ: Նանն առաջվա պես սկի չէր ուզում հարսին քանի դնել: Բանն այն էր, որ քանի հարսը տանն էր, նրան թվում էր՝ որդին ապահով է, բայց հենց որ նա հեռանում էր աչքից, նանը հուսահատվում էր. ամեն քան դատարկ ու անպետք էր թվում, իսկ հարսը «արտին սին էր տալիս», ինչպես ինքն էր ասում: Սակայն հոր խնդիրը, այս երրորդ անգամը լինելով, չկարողացավ մերժել: Չկարողացավ նրա համար, որ աշուն էր, բանուգործը պատճառ չէր կարող բերել, և նրա՛ համար, որ խնամին չնեղանա իրանից և աղջկանը կովով, գոռով տանի, ինչպես արել էր մեկը հարևան Խաչի գյուղում:

— Թող գա, խնամի ջան,— ասաց,— ես էլ ուզում եմ սիրտը բացվի. ջահել է...— Պատավն անկեղծ էր խոսում. ջահել է, թող գնա մի քիչ ազատ ման գա, իրա պատճառով շարունակ կողքին նստելու չի, գուցե հենց այդպիսի մի ցան-

կությունն էլ ունի Վարդիշաղը, որ մի քանի օրով գնա հերասնց տուն.— Թող գա, խնամի Խունկի, քայց շուտ ետ բերես. մե-
նակ կարքմ չեմ. սովորել եմ... Հրես մեր հայն էլ կգա՝ տես-
նենք ի՞նչ է ստում:

Պառաւը խոսում էր մարդու մասին:

Քիչ հետո ծեր Ռսկանն ու հարսը՝ Վարդիշաղը, եկան բու-
տանից մի-մի դդում ձեռներին: Ծերունին արխալուղով էր,
Վարդիշաղն ամենօրյա իր կապույտ շորերով, մի սև գոգնոց
կապած և ներմակ գլխաշորով: Հորը տեսնելով՝ նա գլխա-
շորն ուղղեց, ամաչկոտ քայլերով մտնեցավ, բարևեց, և մտավ
ներս՝ շորերը կարգի բերելու: Իսկ ծեր Ռսկանը նստեց գե-
րանին: Խնամու գալու նպատակն իմանալով՝ տվեց իր հա-
մաձայնությունը:

— Թո՛ղ գա բեխեն, ինչ կա որ, թող գա,— խոսեց նա
անատամ բերանը չսպասցնելով, այնպես որ ներմակած և
դեղնած բեղերը քիչ էր մնում բերանը մտնեին:— Թո՛ղ գա...

Երեկոյան դեմ Դեղին Ծիտը, աղջկա առաջն ընկած, տա-
րավ նրան իրենց գյուղը: Վարդիշաղն իր շորերից մի կապոց
արավ, համբուրեց կեսոր, կեսրարի ձեռքը ու գնաց:

Ծերերը ճանապարհ դրին նրան մինչև քակի դուռը:

— Թեզ կգաս, հա՛,— պատվիրեց նանը մի քանի անգամ:

Վարդիշաղը գլխով անելով հեռացավ:

Բայց նրա գնալուց հետո տունը նանին թվում էր դա-
շարկ: Նա հաճախ նստում էր տան շեմին և օրերը համբուր, թե
երբ պետք է Վարդիշաղը գա: Երբեմն էլ անհանգիստ,
տխուր դիմում էր մարդուն.

— Վարդիշաղը եկավ ոչ, ա՛յ մարդ...

Եվ ծեր Ռսկանն ամեն անգամ, բերանը չսպասցնելով,
պատասխանում էր.

— Կգա, էլի. քա հո մնալ չի... Մի օր կգա...

Երկու շաբաթ հետո սակայն լուր եկավ, թե Վարդիշաղն
էլ չի գալու. նրան տվել են լորումեցուն:

Տվել են լորումեցո՛ւն... Ուրեմն Դավիթը մեռած է, Դա-
վիթը չկա՛... Դրա համար էր ստում տանուտեր Արսենը...

— Լեզուդ չորանա՛, տանուտեր Արսեն...

Ծեր ամուսինները մնացին մեկակ: Ամբողջ աշունն ու ձմեռ տնից գրեթե դուրս չեկան: Նանը մինչև անգամ եկեղեցի չէր գնում. «Եթե նրանում մի գործոթին կար, ըսենց չէր ըլի», ասում էր հաճախ: Չէին գնում և մեծ որդու տուն (բաժանքից հետո առհասարակ ստեղ էին): Նրանց երկար ճանապարհը տնից գոմն էր, գոմից տուն, ամբողջ ժամանակ զբաղվում էին տավարի և հավերի հոգսով: Երբեմն մինչև ուշ գիշեր ծերունի Ոսկանը նրագը ձեռին մնում էր գոմում, սպասելով, որ տավարը դարմանն ուտի. ո՛վ է իմանում, եզներից մեկը հանկարծ կարող է կապը կտրել և կովին հարուտալ, որ էսօր-էգուց կարող է ծնի: Իսկ նանն այդ ժամանակ մի հին գուլպա ձեռին նստում էր տանը՝ օջախի մոտ և, ըստ սովորության, դնդնում: Դուրսը քամին ու բուքը թռչում էին Կաղնուտի գլխով և անվերջ սուլում, շվշվում ու շառաչում բարդիների մեջ. թափում էին ձյունը կտուրներից, ձյունով խփում էին լուսամուտներից և վնգվնգում ծխնելույզներում: Ու ամբողջ գիշեր այդ ցրտի ու բուքի մեջ գնացքները գնում էին էլի, սուլում, ճչում էին գյուղի մոտ և գողգողալով անցնում կամուրջը: «Անտեր մնաք, յարաք էլ ո՛ւմ տունն էք քանդելու», ասում էր նանն ամեն անգամ գնացքի սուլոցը լսելիս: Ու հիշում էր այն օրը, երբ Դավիթը վագոն նստեց և ասաց. «Մնաս բարով, նանի»... «Մեռնի քու մերը, իմ թառլան բալա, որտե՞ղ մնացիր յարաք, ո՞ր շուրի մեջ, ո՞ր քարի տակ... գոնե մի կտոր շոր, մի նշան հասներ»... Ու տրորվելով՝ դնդնում էր նանը, մինչև որ ծեր Ոսկանը գալիս էր գոմից:

Ու այսպես մինչև գարուն: Իսկ գարնանը, երբ վար ու ցանքն սկսվեց, ծերունին արորը սարքեց և գնաց վար:

Եվ մի քանի օր էր արդեն վար էր անում:

Գարնան արևն անուշ տաքություն էր փռել Կաղնուտում, տավարը բակերում տաքանում էր, հավերը քրքրում էին անցած տարվա աղբակույտերը: Ամեն կողմից լսվում էր գառների ձայն, երեխաների աղմուկ. հանդից լսելի էին գութանավորների և մեծավոր շթվորների ձայնը, որ խրախուսում էին եզներից: Օդը լիքն էր ձայների ժխորով:

Մաշն անց էր: Պառապ Մարանը շեմքի մոտ ամաններ էր սրբում ավազով: Հինգ-վեց հավ՝ արլորի հետ միասին, վիզները երկարած, ոտներու մոտենում էին նրան, սպասելով, որ տիրուհին, ինչպես միշտ, ամաններից մի բան կթափի. բայց նաև, անուշադիր հավերի ցանկության, խորասուզված իր գործն էր անում: Չամբարը, նրա կողքին նստած, գլուխը թաթերին, աչքերը երբեմն-երբեմն բանալով, նայում էր պառապին, նայում էր հավերին ու նորից ննջում՝ արևի ակտիվ ժելի տաքությունը վայելելով: Մեկ էլ նա մոռաց հանկարծ և մի ակնթարթում ցատկեց տեղից ու հաչելով առաջ վազեց: Հավերը կշկշացին և, վիզները ձիգ-ձիգ տալով, խմբվեցին արլորի շուրջը: Ո՞վ է... Նաևը ձեռը դրեց ճակատին և իր քաղված աչքերով նայեց շան ետևից: Ինչ-որ մեկը գալիս էր դեպի իրեն՝ մի հաստ ձեռնափայտ ձեռին: Գալիս էր կամաց-կամաց ու ծանր-ծանր շուրջն էր նայում: Հագին գինվորի շինել ու գլխարկ էր, բայց ինքը գինվորի նման չէր երևում. կաղում էր մի քիչ, գլխարկն էլ աչքերին էր քաշել:

«Տե՛նառ ո՞վ է», մտածեց նաևը ձեռը ճակատին: «Չլինի Դավոյի մասին մի բան գիտի...»:

Եկողը աչքերը շորս՝ էլի նայում էր ամեն կողմ: Այս բանը և՛ վախեցրեց, և՛ զարմացրեց պառապին: Բայց նրան զարմացրեց ավելի այն, որ շունը, երկու բերան հաչելուց հետո, սկսեց հոտոտել եկողի փեշերը և փաթաթվեց ոտներին: Տե՛ր Աստված, ո՞վ պիտի լինի սա... Նաևը, առանց տեղից շարժվելու, շարունակում էր նայել զարմացած. հետո ամանները հավաքեց իրար մոտ, որ հավերը չդիպչեն նրանց, ու դարձյալ նայեց: Եկողը եկավ կաղալով, եկավ ու հանկարծ՝ «Բարով, նաևի՛» ասաց:

Պառապը գրեթե ծուլ եղավ տեղից:

— Ա՛խ, Դավո շան...

Ու ծեղ Չամբարից բացի, ոչ ոք չտեսավ, թե ինչպես մայր ու որդի գրկեցին իրար ու լաց եղան... Պառապը զարմացած էր, առաջին կանգնած էր մի ուրիշ Դավիթ. ձայնը նրանն էր, բայց ինքը սկի նման չէր. աչքերը խոր ընկած, ոսկորները սրված, մի թշի վրա էլ ինչ-որ սպի կար. գնդակի տե՛ղ էր, ի՞նչ էր... Նաևն ուզում էր հարց ու փորձ անել, բայց չկարողացավ: Եվ քիչ հետո, երբ մտան ներս, երկու

փոքրիկ, քառակուսի լուսամուտներով սենյակը, նա սկսեց խոսել հուզումից անկապ, կցկտուր:

— Ո՛վ գորավոր սուրբ Սարգիս... Ախր երազում տեսնում էի, Դավո ջան, տեսնում էի, որ՝ չէ...

Ու խոսում, խոսում էր երկար և կարճես ուզում էր մի քանի տարվա անցուդարձը պատմել մի քանի րոպեում:

— Գնում էի նամակի, սրան էի հարցնում, նրան էի հարցնում. «Կա ոչ որ, կա ոչ»... Իսկ գարի գցողն էլ ասում էր՝ նեղ տեղ է: Հերվա ֆորթն էլ մատաղ էի խոստացել՝ սատկեց...

Խոսում էր պատալը և տան անկարգ դրած իրերը կարգի բերում, խոսում էր և նայում Դավթին: Տեսնելով, որ Դավթի ճայում է տան իրերին, ծալքին, խոսքի ընթացքը փոխեց.— Հա, ճոթ ու կտորն էլ էնքան թանկացել է, որ ոչ յորդանի երես ենք կարում առնել, ոչ դռշակի: Սաղ ճղվել, իրարից էլել են... Ամեն բան կրակի գին է դառել, այ կրակվեն դրանք... Էլած ձուռն նավթի ու սպիշկի չի հերքում: Էն էլ շատ ժամանակ չի ըլում. ամիսներով անթեղ են անում...

Դավթի ընդ, մորը լսելով, նայում էր միաժամանակ կից սենյակի դռան և դեպի բակը: Երկար լսելուց հետո, վերջապես, ընդհատեց մորը.

— Բա էս մերոնք ո՞ր են,— հարցրեց հանկարծ:

— Մերո՞նք,— երկարացրեց խոսքը նաև, շուրթերը սեղմելով:— Հերդ, Դավո ջան, գնացել է վար անելու: Երկու օր է մեր դիմացի արտը վարում է... Հողը, ասում է, շատ է պընդացել: Դե, իրա ուժն էլ չկա էն վաղվա... Խեղճ հայր հայից ընկել է: Դու էլ մի խաբար չես անում... Միշտ ասում է. «Գա՛ երեսիս մի բուն հող գցի, էլ՝ հեչ...»:— Նա հառաչեց երկար ու շարունակեց.— Ծիրանանց Արշոն, ասում են, իմացե՛լ ես, կուրանա նրա մերը, ընկել է ձիու տակը՝ սպանվել... Կալավեր է եղել, ի՞նչ է, գիտեմ ոչ... Իսկ Իրիցանց Սեթոյի, էն մեր շաշ, Անդարդ Սեթոյի ոտները, ասում է, կըտրել են քալնիցումը. իմացե՛լ ես... Հերն ուզում է եզը ծախի, գնա որդուն տես, մեծ տղեն թողում չի: Հերն ասում է՝ «Բա Սեթոյին մի եզը չի՞ հասնի»... Իսկ մեծ տղան թե՛ «Ես կրածանվեմ, ասում է, եթե էդպես բան անես»... Ու մնացել են էդպես:

Դավիթը լուռ լսում էր մորը և էլի նայում կից սենյակին և քակի դռան:

Երկար լսեց, լսեց և նորից ընդհատեց մորը.

— Բա էն հարսն ո՞ր է գնացել...

Որդու հարցը շփոթեց պառավին. նա չկարողացավ իսկույն պատասխանել: «Իմացե՛լ է տե՛նաս, թե չէ», մտածեց և, աչքերը գետնին, սկսեց թախտի կարպետի ծալված ծայրերն ուղղել:

— Վարդիշա՛ղը, — խոսեց նա կարպետի հետ խաղալով. — Վարդիշաղը հերանց տուն է գնացել... — Ու, խոսքը չավարտած, հառաչեց: Պատալի ցամաք շուրթերը դողում էին. չէր իմանում ի՞նչ պատասխանի որդուն, քիչ էր մնում լաց լինի, բայց զսպում էր իրեն, շուրթերը սեղմում էր էլի, և նրա խորշումած դեմքը դրանից ավելի էր կուչ գալիս:

Դավիթը նկատեց մոր հուզումը և կանաչ կանթով գլխարկը, որ մինչ այդ գլխին էր, վերցրեց և նստեց թախտի ծայրը:

— Ի՞նչ կա, քան է պատահե՛լ...

Նանը լուռ էր:

— Դե՛ ասա, տե՛նանք, ի՞նչ կա, — շարունակեց Դավիթը, մոր լռությանից ինքն էլ անհանգստացած: Պատալը փղձկաց հանկարծ և սկսեց արտասպել:

Ու պատմեց բոլորը:

— Ա՛խ, ասողի լեզուն չորանա՛, չորանա՛...

Մի ժամ, ժամից ավելի, Դավիթը մնաց միևնույն տեղը անխոս նստած, արմունկները ծնկներին, գլուխն ափերի մեջ առած, մտածում էր: Հետո ելավ տեղից, գլխարկը վերցրեց, փայտը ձեռն առավ ու գնաց դեպի դուռը:

— Ո՞ր, Դավո ջան, — հարցրեց նանը վախեցած:

Դավիթը առանց ետ դառնալու, ասաց.

— Գնամ տե՛նամ ի՞նչ է անում ապի՛ն...

Ասաց ու առաջ գնաց կաղալով:

Մայրը հուզումի մեջ մոռացել էր որդու կաղալը:

— Բա էդ ոտիդ ի՞նչ է պատահել, այ տղա, — հարցրեց երկյուղով:

— Հե՛չ, — պատասխանեց Դավիթն առանց ետ դառնալու:

Մայրը հասկացավ, որ գնդակի դիպած պիտի լինի, չու-

գեց հարց ու փորձել, տեսնելով, որ Դավիթը տրամադիր չէ խոսելու. հետո մանրամասն կպատմի երևի...

— Կա՛ց, Դավո ջան,— ասաց նաևր տեղից ելնելով:— Բա մի բան չե՞ս ուտում: Կաց մի թեթև ձվածեղ անեմ:

— Չէ՛, հարկավոր չի,— հրաժարվեց Դավիթը: Բայց նաևր լսել անգամ չուզեց և, «կաց, կաց» ասելով՝ դուրս գնաց: Եվ Դավիթը սենյակի փոքրիկ քառակուսի լուսամտուտից տեսավ, թե ինչպես մայրն արագ-արագ գնաց դեպի գոմը: «Երևի ձու բերելու»,— մտածեց Դավիթը, և նաևր նրա աչքին այնպես փոքրացած ու թեթև երևաց, կարծես պատաված երեխա լիներ, որ քայլում էր շտապելով: «Ոտներն էլ բոբիկ են», մտածեց Դավիթը և նոր միայն ուշ դարձրեց մոր հագուստին, որ նման էր մուրացկանի շորերի: «Ոնց որ ուզողի շորեր լլեն», մտածեց Դավիթը և խնդաց տխուր. «Իսկ Վարդիշաղը մարդի է գնացել...»:

Վարդիշաղը... Օտարականի պես կանգնել էր Դավիթը սենյակի մեջտեղը և չորս կողմն էր նայում: Ծալքը նորից նրա աչքովն ընկավ և մոտեցավ ծալքին. տեսնես տարե՛լ է Վարդիշաղն իր անկողինը, բաժինքը, շորերը, թե՛ չէ... Դավիթը հիշում էր կնոջ վերմակն ու դոշակը երեսի կտորից. մեկը գոլ-գոլ էր, մյուսը՝ վարդագույն նախշերով: Ոչինչ չկար... Դե, էլ ինչի՞ է նայում. «Իհարկե տարած կլինի», մտածեց նա և, մորը չսպասելով, փայտը ձեռին դուրս եկավ բակը:

— Ո՛ր, Դավո ջան, ո՛ր ես գնում,— ձայն տվեց նաևր գոմի կողմից: Նա զգուշությամբ ինչ-որ բան էր բերում գոգնոցով:

Դավիթը չպատասխանեց:

— Մի բան ուտեիր, ա՛յ տղա:

Դավիթը ձեռը թափ տվեց: Հարկավոր չի՛...

Ու գնաց: Նաևր մինչև փողոց աչքով ճամփու դրեց նրան՝ մի թաքուն ահ սրտում. ինչո՞ւ այդպես հանկարծ գնաց Դավոն...

Դավիթը կամացուկ ու դանդաղ դուրս եկավ փողոց և քայլերն ուղղեց դեպի դիմացի արտը: Վարի օր էր, փողոցում մարդ սակավ էր պատահում. պատահողներն էլ կանգնում էին և նայում նրան: Գլուղում զինվոր հազվադեպ էր լինում,

այդ պատճառով նայում էին ուշադիր, հետաքրքիր: Մի կին, որ երկու հորթ իրար կապած, առաջն արած քշում էր, երկար նայեց նրան և դարձավ կողքի կնոջը. «Մաճկալանց Դավիթը չի՞, ախշի. Ռսկանի տղեն»... «Հլե ոնց որ նա ըլի», պատասխանեց մյուսը: Դավիթը նանաչեց այդ կանանց. մեկն իրենց հարևան Պետրոսի կինն էր, մյուսը ժամհարի հարսը. բայց շատասխանեց նրանց տարակուսանքին: Նա էլ իր հերթին նայում էր գյուղի տներին, որոնք բոլորն էլ կարծես իջել, փոքրացել, խրվել էին գետնի մեջ, էլի Արտեմի խանութն էր մեճակ, որ աչքի էր ընկնում ներկած դռներով... Գնում էր նա և նայում տներին. տեղ-տեղ շները հաչում էին նրա վրա, երեխաները կանչում էին «ոտո՛ւս, ոտո՛ւս»... Այս բոլորին նա ոչ մի ուշ չէր դարձնում, թվում էր նրան, թե անցնում է օտար մի գյուղի միջով այնպես, ինչպես անցնում էր Կարպատի, Պոլշի և Ռուսաստանի գյուղերի միջով: Բայց ոչ մի տեղ, ո՛չ Կարպատում, ո՛չ Պոլշում, ո՛չ Ռուսաստանում նա իրեն այնպես օտար ու մեճակ չէր զգացել, ինչպես այստեղ՝ իր հայրենի գյուղում: Նրա մտքից չէին հեռանում մոր խոսքերը՝ «Վարդիշաղը մարդու է գնացել». ու այնքան վատ էր զգում իրեն, որ չէր ուզում մարդ տեսնել, և աշխատում էր շուտով դուրս գալ դաշտ... Աջ ոտի վրա կաղալով, ձեռնափայտը ձեռին, վերջապես, դուրս եկավ գյուղից և հասավ գետափ: Դեռ գյուղի միջից, երբ շները չէին հաչում, լսվում էր գետի խշխշոցը: Ջրի այդ ձայնը ծանոթ էր Դավթին, բայց դա էլ հեռավոր ու օտար էր թվում: Գետը հոսում էր հորդացած ջրերով. պղտոր ու մթնած ալիքները մոմոտ էին և հրհրում միմյանց կավե պատնեշների մեջ ու շարունակ խշշում, թշշում, կարծես բողոքում, տրտնջում ու զայրանում էին ում որ դեմ:

«Վարդիշաղը մարդու է գնացել», — կրկնում էր Դավիթը մտքում, գետի ջրերին նայելով, և նրան թվում էր, թե ալիքները նշում են՝ «Կինդ չկա, կինդ չկա»... Այո, չկա... Ուրեմն ի՞նչ, ինքն ալելորդ է... Չկա՞. լա՛վ. ո՛վ է մեղավոր. ուրեմըն, ի՞նքը, թե՛ նա... Եթե ժամանակին լուր ուղարկեր, Վարդիշաղն, իհարկե, չէր գնա... Ո՛վ ասաց, թե չէր գնա... Հայրը՝ Դեղին Ծիսը, միևնույն է, կտաներ էլի... Բայց ոչ, հազիվ թե... Եթե լուր ուղարկեր՝ հազիվ թե... Իսկ ինչո՞ւ Վարդի-

շաղն այդպէս արավ... Եթէ նա սիրում էր՝ պիտի համբերեր... Համբերե՛ր...

Մտածում էր Դավիթն ալիքներից նայելով, և ալիքները, թվում էր՝ կանչում էին էլի. «Կինդ չկա, կինդ չկա»... Լա՛վ, ուրեմն ինքն ավելո՞րդ է: Ավելո՞րդ... ինչո՞ւ ավելորդ... Կերթա անա իր ծեր հորն օգնելու, կերթա հիմա կփոխարինի նրան, որ վաղուց ի վեր սպասում է իրեն, հոգնած ու հալից ընկած... Ինչո՞ւ է ավելորդ, կերթա, կգբադվի նորից հին գործով, արտ կցանի, կալ կկալսի, ինչպէս ատաջ...

Բայց որքան էլ Դավիթն ուզում էր մոռանա կնոջը, չէր լինում. ալիքները, գետափի ուռիները և քիչ վերև երևացող կամուրջը, բոլորը հիշեցնում էին նրան.— այս ջրի միջով էր, որ ձիով գնացին նշան, ուռիներն այսպէս նոր էին կանաչել, երբ պսակվեց, և պսակից մի ամիս հետո այն կամուրջով էր, որ ինքն ու կինը՝ նորահարս ու նորափեսա, միասին գնացին Վարդիշաղի հերանց տուն, և ջրի էն կողմն էր, որ Վարդիշաղն ասաց. «Ինձ համար կրնկավոր բաշմակ կանես»:

Երկար պիտի մնար Դավիթը գետափին կանգնած, եթէ չաթափեցնեին նրան մի խումբ ոտաբոքիկ երեխաներ, որ հաչոնի չէ որտեղից, աղմուկով թափվեցին գետափ և սկսեցին կատվի պէս մագլցել ուռիները: «Տենանք ով շուտ, տենանք ով շուտ»,— կանչում էին նրանք և կտրտում ուռիների նոր բացված դեղնականաչ ճյուղերը: Նրանց նայելով՝ Դավիթը գլուխը շարժեց, ժպտաց երեխաների ճարակոթյան վրա և նորից կաղալով շարունակեց ճանապարհը դեպի Դիմացի արտը: Երբ կամուրջն անցավ, արտը երևաց. կեսից ավելին վարած էր արդեն. երևում էր, որ երկու օրվա վար է. մի մասը շեկին էր տալիս, մյուս մասը սև էր ու թարմ: Դավիթը կամաց-կամաց մոտեցավ: Ծեր Ռսկանն, ուրագն արխալուղի գոտին խրած, զառամ ձայնով անընդհատ խրախուսում էր եզներից. «Հա՛, քե մատաղ, հա՛, քաշի, հա՛»... Եվ եզները, մեջքները լարած, գնում էին համաչափ քայլերով, իսկ նրանց ետև բացվող ակոսից բարձրանում էր թեթև, բարակ ծխի նման թեթև գոլորշի:

— Բարի աջողում, ապի,— ասաց Դավիթը հորը մոտեցալով և, քրտնած լինելով, գլխարկը վերցրեց:

Հայրն ավելի ուշ ճանաչեց որդուն, քան մայրը: Դավիթ-
թը... Երկար չէր հավատում և նայում էր ձեռն աչքերին
հովանի արած: Երբ վերջապես, համոզվեց՝ Դավիթն ինքն է,
բռնեց որդու գլուխը և համբուրեց նրա քունքի մազերը, ապա
սկսեց զանգատվել, թե ինչո՞ւ այսքան ծամանակ նամակ
չէր գրում, ու իրենք էլ, ո՛վ է իմանում, ինչե՞ր էին մտա-
ծում:

— Խեղճ մերդ ամեն օր լաց էր լինում, հայ էս ո՛նց
էլավ, էս ի՛նչ էլավ,— խոսում էր ծերունի Ռայանը դանդաղ,
զստամ ձայնով. նրա անատամ բերանը չապում էր, և բեղերի
մազերը քիչ էր մնում բերանը մտնեին: Մոր նկես հայրն էլ
փոքրացած ու թեթևացած էր թվում Դավիթն. ավելի նիհա-
րել էր ու ծերացել. հոնքերը բոլորովին ճերմակել էին և կախ
ընկել աչքերի վրա, մինչև անգամ ականջների մազերն էլ
ապիտակել էին:— Դե, լավ արիր, որ եկար, որդի. լա՛վ
արիր,— ասում էր նա շուտ-շուտ:

Եվ երբ բավական խոսել էր, մի ձեռով մեջքը բռնած,
մյուսով, գետնին դիմհար տալով, էլավ վարը շարունակելու:
Բայց Դավիթը չթողեց:

— Թող, ապի,— ասաց,— էս կվարեմ...

Եվ, ձեռնափայտն ու շինելը թողնելով հոր մոտ, մաճը
ձեռն առավ: Եզներն առանց ճիպոտի շարժվեցին: Դրանք
հին եզներն էին, որ այժմ բավական պատալել էին, բայց և
ավելի փորձառու դարձել: «Էհ, գնացել է, գնացել», մտածում
էր Դավիթը կնոջ մասին. «Թո՛ղ գնա... էլ կնիկ չի՞ ճարվի
աշխարհում», ավելացնում էր դառնացած, վրեժխնդիր
և վաճճ ամուր սեղմում ձեռքում: Վարժ եզները գնում էին
համաչափ քայլերով և ակոսները կանոնավոր շարում էին
իրար կողքի: Գոհ էր Դավիթը. եզների հմտությունը զար-
մացնում էր նրան, այնպես կարգով էին քայլում: Չորրորդ
թե հինգերորդ ակոսի վերջում, սակայն, արորը հանկարծ
դուրս արժավ ակոսից և վարածն ընկավ: Դավիթը ոտը դեմ
տվեց՝ արորն իր տեղը գցելու, և հանկարծ... ծունկը բռնեց
ու չոքեց: Ի՛նչ պատահեց: Նա սաստիկ ցավ զգաց. ծնկին
դիպած հին գնդակի տեղն այնպես ծակեց, կարծես մեկը
շամփրեց՝ նրան. ոտից մինչև գլուխ վազեց մի տաք հոսանք,
և քրտինքը միանգամից ծածկեց նրա ճակատը: Նա ծունկը

բռնեց և կամաց շփեց: «Ոչինչ, բա՛ն չկա. վատ տեղ դի-
պավ», — մտածեց նա և շարունակեց վարը:

Հետևյալ ակոսում կրկնվեց նույնը:

Այս անգամ ծերունի Ռսկանը նկատեց և մտնեցավ որ-
դուն:

— Ի՞նչ պատահեց, Դավիթ ջան...

— Հեշ, ծունկս չթի՛ն դիպավ, — պատասխանեց Դավիթը
ծունկը բռնած:

Հայրը ձեռը մեկնեց, որ ինքը վարի, բայց Դավիթը դարձ-
յալ չթողեց և, ծունկը ցավելով, վարը շարունակեց: Հայրը
նստած նայում էր նրան և հոգով խնդում ուրախությունից,
որ մեկնակ չմնաց, որ կորած Դավիթը եկավ նորից... Մըտ-
մըտում էր ծեր Ռսկանը և խանդադատանքով նայում որդու
ետևից: Մեկ էլ տեսավ՝ Դավիթը չոքեց նորից: Ի՞նչ պատա-
հեց էլի: Նա կրկին մտնեցավ որդուն: Դավթի դեմքն այս ան-
գամ ծամածուլել էր ցավից, և գուցնը թռել... Ծնկից դարձ-
յալ մի տաք հոսանք էր վազում դեպի գլուխը, և ծունկը կար-
ծես շամփրում էին կրկին:

— Խամությունից կըլի, խամությունից, — ասաց հայրը:—
Դու նստի, նստի, ես կվարեմ...

Դավիթը ծունկը բռնած գնաց դեպի շինելը: Նա չարմա-
ցած էր. ինչո՞ւ հանկարծ ծունկը ցավ տվեց այդպես: Ծիշտ
է, գնդակը դիպել էր ծնկին, հանել էին, և դրանից էր, որ
թեթև կաղում էր, բայց նրան թվում էր միշտ, որ այնուա-
մենայնիվ իրենց գործը կանի: Նա թե ձեռքից և թե ոտքից
վիրավորվել էր Կարպատներում կամ, ինչպես ինքն էր ասում,
Կարպատում. պատկել էր հիվանդանոցում և ամբողջ հիվան-
դանոցի հետ գերի էր ընկել, նորից հիվանդանոցի հետ
ազատվել էր գերությունից, և միշտ էլ նրան թվացել էր, որ
լա՛վ վիրավորվել է, այդպիսով կազատվի ծառայությունից,
և որքան էլ ձեռքն ու ոտքը վնասված լինեն, այնուամենայնիվ
իրենց գեղական գործը կարող է անել: Բայց ահա՛ էլ ինչի՞
է պետք... Հայրը՝ ծեր մարդ, նա պիտի աշխատի, ինքը նա-
յի՞... Մտածում էր Դավիթը դառնացած և նայում հորը, որ
մեջքը կքած, հագիվ կարողանում էր քարշ գալ արտրի հետ:
Նայում էր հորը, նայում էր գլուղին ու մտածում: Այիքավոր
օղը վետվետում էր նա առաջ, ազոավները հանդարտ, ան-

վախ իջնում էին հոր ցանքսի վրա և ցորենի հատիկները վեր քաղում: Հեռվից, մոտիկից, գյուղի այն կողմի արտերից, բլուրների լանջերից լսվում էին գութանավորների և շթվորների ձայներ. գյուղում բառաչում էր մի, ըստ երևույթին, նորածին կով՝ երկարաշունչ ու սրտախոր մի բառաչով, որը տարածվելով գյուղի վրա՝ դողդողում էր ջինջ օդի մեջ և արձագանքներով գնում դեպի դաշտերը: Երբեմն լսվում էր նաև շների հաչոց, երեխաների աղմուկ... Ու այդ բոլորը՝ թե՛ գութանավորների ուրախ հորովելը, թե՛ կովի կարոտակեզ բառաչը, թե՛ շների հաչոցը և թե՛ երեխաների աղմուկը, բոլորը, բոլորը, թվում էր Դավթին, որ միևնույն բանն են կրկնում, որ ինքը ավելորդ է, անպետք... Բոլորը՝ մեծ, փոքր, մարդ թե՛ անասուն, պետք են մի բանի, իսկ ինքը ինչի՞ է պետք իր ուտքով... Եվ նա, ցավող ծունկը բռնած, տխուր նայում էր բարդիների մեջ կորած Կաղնուտին, լսում էր հստակ օդում տարածվող ձայները,՝ հիշում էր կնոջը և կրկնում միևնույնը, որ ինքն այլևս ավելորդ է ու անպետք: «Էլ ինչի՞ եմ պետք»... Ու իր հարցին պատասխան չէր գտնում:

4

Օրը կամաց-կամաց երեկոյանում էր, բայց Դավիթը տեղից չէր ելնում. ծունկը դեռ մոմոմ էր: Հայրը մի քանի անգամ խորհուրդ տվեց գնալ տուն: Չուզեց: Ո՛ր գնա, ի՞նչ պիտի անի տանը... Ծեր մարդն աշխատի այստեղ, ինքը գնա՞ տուն: Ի՞նչ կա տանը... Եվ նա նույն տեղը նստած մնաց այնքան ժամանակ, մինչև որ հայրը եզներն արձակեց և սայլը լծեց: Նա օգնեց հորը եզները սայլին լծելու, ապա շինելը հագավ և, կաղալով, առաջվանից մի քիչ ավելի կաղալով, գնաց դեպի գյուղ: Ո՛ր է գնում, ի՞նչ պիտի անի տանը, ի՞նչ կա տանը, մտածում էր նա և զայրույթով ցավող ոտքն ավելի ամուր խփում գետին...

Այն ժամանակ, երբ նա թեքվում էր դեպի գետը, նկատեց, որ իր ետևից, նույնպես դեպի գյուղն էին գալիս երեք ձիավոր: Ուշ չդարձնելով եկողներին՝ նա շարունակեց ճանապարհը: Չիավորները մոտենում էին հետզհետև: Դրանցից մեկը տանուտեր Արսենն էր, մյուս երկուսը՝ նրա գզիրները,

հրացանները թիկունքով գցած: Տանուտեր Արսենը, ինչպես միշտ, չերթեզի չուխան հագին, գոպակը թեք, բեղերը երկար ու սուր, որ հիշեցնում էր Նասրը-Էդդին շահին, ուղիղ՝ շիֆ-շիտակ նստել էր ձիուն, և ձին նրա տակ գնում էր «ջրի պես», բաշը քամուն տված: Իսկ գզիրների ձիերը հետևում էին նրան սալում լծվող հոգևած լաբունների պես ցինգիր-ցինգիր անելով: Տանուտեր Արսենը գալիս էր իր տանուտերությանը ենթակա Խաչի գեղից, ուր գնացել էր դասալիք զինվորներ բռնելու: Երկու օր առաջ նա «սրոչնի» թուղթ էր ստացել, որ Խաչիգեղցի երկու զինվոր փախել են, դրանց անունը գրած էր թղթում, պետք է բռնել և ուղարկել: Հրամանը պրիստավից էր և շատ խիստ: Բացի դրանից, թղթում գրած էր, որ ընդհանրապես հետևել պիտի, որ փախած զինվորները չթաքնորվեն գյուղերում: Եվ ահա տանուտեր Արսենը գնացել էր այդ հրամանը կատարելու: Խուզարկել էր փախած զինվորների տները, մարագը, գոմը, նայել էր ամեն տեղ, մինչև անգամ նրանց ազգականների տները: հարց ու փորձել, սպառնացել էր նրանց ծնողներին, հարազատներին և... ոչինչ: Փախածները չէին գտնվել: Քանի անգամ բռնել էր այդպիսի «լրբերի»՝ թքել, մրել, ուղարկել և էլի՛ հե՛ջ. գալիս են... հե՛նց այդ Խաչիգեղցի մեկը փախել էր երեք անգամ էրզրումից: Բայց թե որտե՞ղ պիտի թաքնված լինեին այժմ Խաչիգեղցի այդ տղերքը՝ նա հասկանալ չէր կարողանում: Այսպիսի անաջողություն չէր ունեցած երբեք. ի՞նչ պատասխան պիտի տար պրիստավին... Մտածում էր տանուտեր Արսենը և ոտքերով շտապեցնում ձիուն, ու ձին նորից գնում էր «ջրի պես»՝ բաշը քամուն տված...

Քեռասիին հասավ Դավթին: Մոտենալով՝ ձին կանգնեցրեց և նայեց նրան: Դավթին իսկույն ճանաչեց տանուտեր Արսենին. նա բոլորովին չէր փոխվել, փոխվել էր միայն հին չերթեզի չուխան. այսինքն՝ առաջվա սևագույնի փոխարեն, այժմ հագել էր դարչնագույն. վազմաները նույնն էին... նույնըն էր գոպակը. էլի նույն 45—50 տարեկան մարդն էր մնացել: Դավթին ամեն ինչ լավ էր հիշում: Բայց տանուտերը չճանաչեց Դավթին. և ինչպե՞ս ճանաչեք. Դավթի նման այնքա՛ն մարդ կար միատեսակ շորերով. բայց գուցեև չուզեց

ճանաչել. դժվար է ասել. այնուամենայնիվ, ձին կանգնեց-
նելով, հարցրեց արագ, թե ո՞վ է և որտեղի՞ց է գալիս:

Դավիթը չպատասխանեց:

— Բեզ եմ, հարցնում, է՛. զինվո՞ր ես:

Դավիթը դարձյալ չպատասխանեց. նա շարունակում էր
քայլել դեպի կամուրջը:

— Լսի՛ր, քեռուս տղա, — շարունակեց տանուտերը հեզ-
նակով, ցուցամատը դեպի իրեն շարժելով, ինչպես անում
են մանուկներին կանչելիս: — Ինչու՞մենտ, բան ունե՞ս, թե՛
զի քոյե:

Դավիթը շինելը թեև ղուրս գցեց և, լեզուն չպսացնե-
լով, գլուխը շարժեց. — Ծը՛ր... — Նրա այդ անտարբերու-
թյունը, գլխի շարժումը և լեզվի «չպսոցը» վրդովեց տանու-
տերին (ո՞վ է սա, որ իրեն մարդաստեղ չի դնում, իր հարցե-
րին չի պատասխանում), և նա ձին քշեց դեպի Դավիթը, կա-
մենալով իջնել ձիուց, բայց մինչ այդ ետ ընկած գզիրները
մոտեցան և, Դավթին ճանաչելով, երկուսը, միասին բացա-
կանչեցին.

— Սա հո մեր Դավիթն է, խալիսա...

Տանուտերը տնքաց. գլուխը թափահարեց, անհայտ է
վիրավորանքից թե թյուրիմացությունից, և ձիու սանձը բաց
թողեց նորից:

Գզիրներն ուզում էին գրուց բացել Դավթի հետ, իմա-
նալ ե՛րբ է եկել, որտեղի՞ց, բայց Դավիթը, անուշադիր նրանց
ցանկության, ատամները սղմած, գլուխը շարժեց տանու-
տերի ետևից, ինչ-որ փնթփնթաց ինքն իրեն և շարունակեց
ճանապարհը կամուրջով:

Կես ժամից հետո նա-տանն էր արդեն: Հազիվ մտել էր
ներս՝ գզիրներից մեկն եկավ և կանչեց նրան կանցիլար:

— Ի՞նչ կա, ո՞վ է կանչում:

— Տանուտերը...

— Տանուտե՛րը... Գլուխը քարով է տվել տանուտերը...

Գնա ասա՛ գալիս չե՛մ, — պատասխանեց Դավիթը վրդով:

Եվ չգնաց:

Բայց թիչ հետո նույն գզիրը նորից եկավ.

— Խալիեն վռագ կանչում է կանցիլարումը...

Դավիթը դարձյալ չգնաց. ի՞նչ գործ ունի նա տանուների մոտ:

Սակայն մի քանի րոպեից երկու գզիր միասին եկան և տարան նրան:

Դավիթը ձեռնափայտը վերցրեց և առաջ ընկավ:

«Մի տեսնենք էդ մարդն ի՞նչ է ուզում ինձանից», — մտածում էր նա նապարհին:

Տանուները, ձեռքերը ետևը դարսած, անց ու դարձ էր անում կանցիլարի բակում և շրթունքները կրծում: Մի քանի գյուղացի և մի կին, նրա մոտ կանգնած՝ ինչ-որ բան էին խնդրում, բայց տանուները, աչքը նամփին, գրեթե չէր լսում նրանց: Երբ Դավիթը գզիրների հետ միասին ներս մտավ բակը, նա ձեռքերը կանթեց մեջքին, կանգնեց և ուղիղ նրան նայեց:

— Հը՛, վերջապե՛ս, — խոսեց նա: — Մեր տղա, դու խանի խոռն ես, նամեսնիկի թոռն ես, որ լայաղ շես անում գալ...

Դավիթը մի ձեռը նույնպես կանթեց մեջքին և ոտից գլուխ նայեց տանուների՛ն՝ մի հոգնած ու դառնությամբ լի հայացքով:

— Է, ի՞նչ կա որ, ինչի՞ գամ, — խոսեց նա ակամա արհամարհանքով, յուրաքանչյուր բանն առանձին շեշտելով:

— Էդ արդեն քո բանը չի՛ ինչի՞ համար, — շարունակեց տանուները: — Քեզ որ կանչում են՝ պրտի գաս: Հասկանո՞ւմ ես... Էստեղ վլաստն՞ է կանչում, հասկանո՞ւմ ես, — բարկացավ տանուները և ավելի մոտեցավ նրան: — Դու ինձ էն ասա՛ դոկումենտ ունե՛ս, թե չէ... Էլ լի՛րբ-լիրբ մի խոսի...

— Դե, լավ, հերիք, — թափ տվեց ձեռը Դավիթը և ձեռնափայտը բարձրացրեց:

Թե՛ գզիրները և թե՛ բակում եղած գյուղացիները լավ չնկատեցին, թե ինչ պատահեց, որ տանուներ Արսենը հանկարծ փովեց գետին:

Գզիրները վրա վազեցին նրան բարձրացնելու:

Բայց նա չէր շարժվում:

Դավթի հարվածը դիպել էր նրա քունքին. նակատից արյուն էր գնում:

Դավթին անմիջապես ձերբակալեցին և տարան ներս:

Երբ-նրա մոտ եղած թղթերը վերցրին, գրագիրը դրանց մեջ գտավ մեկը՝ զինվորական վարչությունից տրված մի թուղթ, որի մեջ գրված էր. «Դավիթ Մանկալով, 28 տարեկան, ազատվում է զինվորական ծառայությունից անպետքության պատճառով...»:

Գրագիր Արշակ աղեն մի քանի անգամ կարդաց այդ թուղթը, կարդաց և չհասկացավ, թե ինչու Դավիթը, մի այսպիսի վկայագիր ունենալով, ցույց չի տվել տանուտերին:

— Ինչի՞ց է վախեցել արդյոք, որ ցույց չի տվել, — զարմանում էր նա, — և ի՞նչ է մտածել, որ ապանել է տանուտերին...

Մտածում էր Արշակ աղան, մտածում և քան չէր հասկանում...